

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

ՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սանթա Գլարիթա, Դեկտ. 20, 2009

Այսու հոգեկան անհուն հրճուանքով կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, յարակից կապմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Կիրակի, Դեկտեմբեր 20, 2009 թուականը յիշատակելի եւ պատմական օր մը եղաւ Սանթա Գլարիթայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, երբ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տէրպէրեան Օծումը կատարեց այս եկեղեցւոյ՝ վայն վերակոչելով Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցի:

Առաւօտեան ժամը 10:30ին Պատարագիչ Առաջնորդ Սրբապան Հայրը հոգեւորականներու թափօրով եւ Խաչատուրեան Երգչախումբի կողմէ երգուած «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, մուտք գործեց եկեղեցիէն ներս: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխին Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Ս. Ներսէս Քհնյ. Հայրապետեան, Հայաստանէն հիւրաբար թեմս այցելող Հոգշ. Ս. Մխիթար Աբեղայ Գրիգորեան, Ֆրէզլոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ ծառայող՝ Բրշ. Էլըն Եղիա Սրկ. Ճենտեան, Եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներէն՝ Բրշ. Սարգիս Սրկ. Սըգայեան, Բրշ. Գուժ Սրկ. Խաչիկեան, քչոցակիրներ եւ մոմակալներ:

Արարողութեան մասնակցեցան Գերշ. Ս. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Ս. Տաճար Ծ. Վրդ. Եարպըմեան, Հոգշ. Ս. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան, Դոկտ. Արժ. Ս. Զաւէն Աւագ Քհնյ. Արվումանեան, Արժ. Ս. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեան, Արժ. Ս. Նարեկ Աւագ Քհնյ. Մատարեան եւ Արժ. Ս. Միքայէլ Քհնյ. Կիւրեղեան: Դպրաց Դասի երգեցողութիւնը կատարեց Խաչատուրեան Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Սրեփան Սրկ. Կէօպիւմեանի եւ երգեհոնահարութեամբ Կիսասարկաւագ Դանիէլ Ագարակեանի:

Ներկայ էին նաեւ թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար Ժուլէֆ Կանիմեան, թեմական Խորհուրդի անդամներ Տիար Արմէն Համբար, Տիար Ռապըրթ Պարսամ իր կնոջ Արփիի հետ, Տիկին Լիլի Ռինկ Պալեան, ինչպէս նաեւ Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի Արեւնապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեան, իր ամուսնոյն Պրն. Յակոբի հետ:

«Հայր Մեր»էն առաջ Սրբապան Հայրը եւ Գերշ. Ս. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, մասնակցութեամբ Հոգեւորականներու եւ Դպրաց Դասի, մի առ մի Առաքելներու եւ Սուրբերու անուններով պատրաստուած եւ եկեղեցւոյ պատերէն ամրացուած խաչերուն օծումը կատարեց ի ներկայութեան կնքահայրերու, որոնք էին.–

Գլխաւոր Մեկենաս՝ Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցին: Աւագ Կնքահայեր՝ Տէր եւ Տիկին Հերոս եւ Անահիտ Քաջբերունի, Լայլա եւ Թալին Էսքիճեան, Տէր եւ Տիկին Նշան եւ Ռուպի Տէրպէրեան, Տէր եւ Տիկին Ռաֆֆի եւ Ռոպան Հատարապետ եւ Ընտանիք, Տիար Էդուարդ Սիմոնեան, Տէր եւ Տիկին Վարդան եւ Լիւրա Վահրամեան եւ Ընտանիք:

Կնքահայրեր՝ Արժ. Ս. Նարեկ Աւագ Քհնյ. եւ Երէցկին Պայծառ Մատարեան, Տէր եւ Տիկին Արմենակ Պալեան, Բրշ. Սրեփան Սրկ. եւ Տիկին Կէօպիւմեան, Տէր եւ Տիկին Ալալըրթ

Խաչիկեան, Տէր եւ Տիկին Գաբրիէլ Սոլոյեան, Տէր եւ Տիկին Վարդավառ Թուֆակ, Տէր եւ Տիկին Սթիվ Համբար եւ Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը:

Կրտսեր Կնքահայրեր՝ Սիմոն եւ Արաքսի Զելէպեան, Վրէժ Տէմիրճեան, Սէթիու Կարսիա, Վարդան Կարապետեան, Յակոբ եւ Արշա Լուսարարեան, Արսէն Մելիքոնեան եւ.....

Արբազան Հայրը օրհնաբեր այս առիթով, խօսեցաւ ոգեւորիչ հետեւեալ քարոզը.–

Եկեղեցին... կեանքի մը արտայայտութիւնն է:

Եկեղեցին... Քրիստոսի կեանքին արտայայտութիւնն է:

(հիմնուած Գարեգին Պատրիարք Տրապիզոնցիի սա խօսքին վրայ)

«Եկեղեցին ոչ ծէս է, ոչ արարողութիւն, ոչ ալ պայմանադրական եւ պարտադրական դաւանաբանք: Կեանքի մը արտայայտութիւնն է այն: Քրիստոսի կեանքին. Անոր երկնաւոր գերզգայութեանց եւ երկրաւոր փորձառութեանց»

Սիրելի բարեպաշտ հաւաքացեալներ,

Այսօր մեր Թեմական կեանքին մէջ լիարժէք կերպով կը ծնի նոր եկեղեցի մը, որն այսուհետեւ իր կեանքի արտայայտութիւնը պիտի դարձնէ Քրիստոսի կեանքը: Աստուածային մեծագոյն պարգեւ մըն է Եկեղեցին՝ իր հաւաքացեալներու աղօթքի ու հաւատքի կեանքով, սիրոյ գործերով, բարի արարումներով ու հոգեւոր առաքելութեամբ, միշտ նպատակ ունենալով Քրիստոնէական դաստիարակութիւնը մանուկներու, պատանիներու, երիտասարդներու եւ համայն համայնքի հաւաքացելոց:

Տարիներ առաջ ձեռնարկեցինք նաեւ այս համայնքի կազմութեան, որուն մէջ իրենց միտքն ու հոգին, սիրտն ու աշխատանքը խառնեցին աշխարհագրական այս տարածքին ապրող խումբ մը հաւաքացեալներ, որոնք Աստուծոյ կանչին պատասխանեցին, որպէսզի իրենց վաւակաց համար ստեղծեն աղօթքի Տուն մը, ուր պիտի ապրին Աստուծոյ հետ:

Փառք կու տանք Աստուծոյ, որ խմորուեցաւ համայնքի կեանքին: Բնական է համայնքի կազմաւորման առաջին տարիներուն եղան դժուարին պահեր, յուսահատութեան շրջաններ, որոնք փորձութիւններ էին: Եկանք հասանք այն պահուն, որ արդէն համայնքը՝ իր նոր կառոյցով եւ իր նորանշանակ Հոգեւոր Հովիւով արմատներ են նետած եւ բարի գործը, Աստուծոյ գործը՝ աղօթքի այս Տունը պահելու, ճոխացնելու նոր հանգրուանին առջեւ ենք կանգնած: Արբազան այս առաքելութեան մէջ առաջնորդող գլխաւոր ոյժը պիտի դարձնենք Աստուծոյ սէրը, Քրիստոսաւանդ խոնարհութեան պարզամը, որուն հրաւերը ստացանք այսօր Սուրբ Աւետարանէն մեզի հաղորդուած պարզամով. *«Ով որ կը բարձրացնէ իր անձը՝ պիտի խոնարհի, եւ ով որ կը խոնարհեցնէ իր անձը՝ պիտի բարձրանայ»:*

Սուրբ Սարգիս անունը կրող այս նուիրականացած Եկեղեցին մեր մէջ պիտի խորացնէ Աստուծոյ սէրը, որպէսզի այդ շնորհով միմեանց սիրենք, միասին գործենք եւ այդ կերպ մեր մէջ առաքացնենք երկնաւոր շնորհները: Սուրբ Սարգիս Եկեղեցին այսուհետեւ պիտի դարձնենք այն հոգեւոր մագնիսը, որ մեզ բոլորս պիտի միացնէ որպէս մէկ ու մեծ ընտանիքի մը հաւատարմոր վաւակները: Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցին, աղօթքի այս Տունը՝ մեր կեանքը Աստուծոյ տանող լոյսի ճանապարհը պիտի դարձնենք: Որպէսզի ամբողջութեամբ մերը դարձնենք այս հոգեւոր Տունը, ապա բոլորս մեր հոգին պիտի դնենք Եկեղեցւոյ գործոց մէջ ծառայութեամբ ու զոհողութեամբ: Հոգեւոր Հովիւ, Ծխական Խորհուրդ, Տիկնանց Միութիւնը եւ բոլորս ձեռք-ձեռքի տուած պիտի ապրինք Քրիստոսի հետ, որպէսզի Եկեղեցին, որուն ապրող մասնակներն ենք, դառնանք Քրիստոսի կեանքին արտայայտութիւնը:

Նոր Տարին եւ գալիք Սուրբ Ծնունդը մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի ձեպի տուած հրաշալի պարգեւն է – տարածք մը իր շէնքով, որ պիտի դարձնէք ձեր կեանքի սուրբ

նպատակը: Այսուհետև, ամեն անգամ երբ մուտք կը գործէք այս աղօթքի Տունէն ներս, Աստուծոյ ներկայութեան պիտի պայծառակերպէք ձեր հոգեւոր կեանքը, ձեր վրայէն պիտի թօթափէք հին մարդը իր բոլոր թերութիւններով եւ նորը պիտի ասարիք ի Քրիստոս, որպէսզի լոյս դառնաք համայնքի կեանքին մէջ սիրոյ ու յարգանքի զգացումներով, ներողամիտ սրտով ու հոգիով:

Սիրելիներ ի Քրիստոս, այս Սուրբ Եկեղեցին պիտի դարձնենք մեր կեանքին արտայայտութիւնը: Ուրեմն պիտի ասարիք քրիստոնէական հաւատքով, պիտի գործէք Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ, որպէսզի մեր կեանքը դարձնենք նաեւ Քրիստոսի կեանքին արտայայտութիւնը:

Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ իր օրհնութեան փակ դուռ մնաք հոգեւոր ուրախութեան մէջ, որպէսզի Սուրբ Էջմիածնի լոյս հաւատքով լեցուած ձեր երկրասարդ Հոգեւոր Հովիւին գլխաւորութեամբ, հրաշքներ գործէք հոգիներ մշակէք Քրիստոսի սիրով եւ դառնաք օրինակելի ու ծաղկեալ համայնք մը Աստուծոյ փառքին համար:

Մեր աղօթքին մէջ խառնած ձեզի կը բերենք Իսթ Լոս Անճելլոսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ փասնեակ փարիներու բարի մաղթանքները, որոնք մոմավառութեան ու գիշերներ լուսացնող խոնարհ աշխատանքներով ձեռքբերուած լուսաներուն արդիւնքը, որ օրհնութիւն դարձաւ ձեր համայնքին համար: Եւ որպէսզի ձեր հոգեւոր վայելքը իր կատարելալին հասնէք, ապա դուք պիտի արդարացնէք ձեր վրայ դրուած յոյսերն ու երազները, որուն համար կասկած չունինք, բայց մեծ ակնկալութիւն ունինք:

Օրհնեալ ըլլաք դուք եւ Սուրբ Սարգիսի հաւատքի կեանքով ձեր կեանքը սրբացնէք ու ձեր կեանքով սրբութիւն ու օրհնութիւն բաշխէք բոլորին:

Եկեղեցւոյ Օծման հոգեպարար արարողութեան առթիւ Սրբազան Հօր մատուցած Սուրբ Պատարագէն մեծ թիւով հաւատացեալներ Սուրբ Հաղորդութիւն ստացան:

Սուրբ Պատարագի աւարտին, Սրբազան Հայրը նոյնպէս թափօրով առաջնորդուեցաւ դէպի Սրահ:

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ ՅԱՅՏԱԳԻՐ

Ճաշկերոյթն ու յայտագիրը փեղի ունեցաւ եկեղեցւոյ կից գտնուող պեպական դպրոցի մը սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով հաւատացեալներ: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան: Բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեան, որ իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար Ժովէֆ Կանիմեանին, որոնց ջանքերուն շնորհիւ կարելի դարձած էր եկեղեցւոյ գնումը: Սուրբ Գրային մէջբերում կատարելով շեշտեց, որ եկեղեցւոյ շէնքէն աւելի կարեւոր է մարդոց հոգեւոր փաճարը եւ այդ ուղղութեամբ Ծուխը քաջութեամբ պիտի շարունակէր իր առաքելութիւնը:

Իսթ Լոս Անճելլոսի Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը իր սրտի խօսքը ուղղեց հանդիսականներուն եւ անդրադարձաւ Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ հոգելոյս Հոգեւոր Հովիւներուն եւ երկարամեայ նուիրեալ ծառայութիւն մատուցող Ծխական Խորհուրդի անդամներուն, Խաչատուրեան Երզնախումբին եւ յարկապէս յիշեց, որ Երէցկին Պայծառ Մատարեան գիշերուան մինչեւ ուշ ժամերը մի քանի Տիկիներով խոհանոցի մէջ պատրաստութիւն կը փեսնէր ձեռնարկներու համար:

Տէր Հայրը իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Տէրպէրեանին եւ Առաջնորդ Սրբազան Հօր, որ մօտէն կը հետաքրքրուէին Սուրբ Սարգիս Եկեղեցիով: Ի սրտէ շնորհաւորեց Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանը, Ծխական

Խորհուրդը եւ Տիկնանց Միութեանը, որոնք եռանդով լծուած են իրենց հոգեւոր առաքելութեան եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց անոնց:

Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Տիար Ուիլերմ Սիմոնեան, որ օրուան հանդիսավարն ալ էր, Եկեղեցւոյ հակիրճ պատմական ըրաւ, նոյնպէս Ծխական Խորհուրդի անունով իր շնորհակալութիւնները յայտնեց Առաջնորդ Սրբապան Հօր եւ Թեմական Խորհուրդին, ինչպէս նաեւ Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Սատարեանին, Ծխական Խորհուրդին եւ Տիկնանց Միութեան: Ապա ներկայացուց Ծխական Խորհուրդի անդամները եւ իւրաքանչիւրին կարարած ծառայութիւնը մեծապէս գնահատեց:

Եկեղեցւոյ Օծման հանդիսութիւնը համակարգող եւ Ծխական Խորհուրդի նախկին Արեւնապետը՝ Տիար Ճան Թունկայեան իր սրտի խօսքը ուղղեց եւ ուրախութիւնը յայտնեց Եկեղեցւոյ Օծման առթիւ եւ կարարեց Սուրբ Գրային մէջբերումներ՝ միշտ փառք տալով Աստուծոյ, որ շնորհիւ իրենց հաւատքի զօրութեան եւ յարատեւ աշխատանքին, Առաջնորդ Սրբապան Հօր ցուցմունքներով եւ յարուկ կարգադրութեամբ, Ծուխը տիրացած էր Եկեղեցւոյ սեփական շէնքին, որ կրօնական ծէսերու կողքին հայ լեզուի եւ կիրակնօրեայ դպրոցը մեր մարտալ սերունդը կը թրծէր հոգեւոր դաստիարակութեամբ եւ հայ լեզուի ուսուցումով:

Հանդիսավարի հրաւերով Տիկն Արշա Լուսարարեան արտասանեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» հանրածանօթ եւ սիրուած բանաստեղծութիւնը, ինչպէս նաեւ Տիկն Անի Տէմիրճեան արտասանեց Պարոյր Սեւակի «Մենք քիչ ենք...» ազգասիրական բանաստեղծութիւնը:

Հայ Լեզուի Դպրոցի աշակերտ-աշակերտուհիները իրենց ուսուցչուհիներու առաջնորդութեամբ արտասանութիւններ հրամցուցին ներկաներուն՝ արժանանալով բոլորի ջերմ գնահատութեան եւ ծափահարութիւններուն:

Լոս Անճելըս Գաւառի Վերակացուներու Մարմնի Անդամ հայասէր Մեծայարգ Տիար Մայքըլ Անթոնովիչի ներկայացուցիչը, Տիար Տէյվիտ Փէրի, Պրն. Անթոնովիչի շնորհաւորական յարուկ խօսքերը փոխանցելէ ետք, Տէր Ներսէս Քահանային եւ Արեւնապետ՝ Ուիլերմ Սիմոնեանին յանձնեց «Շնորհաւորական Վկայագիր» մը: Պրն. Սիմոնեան Եկեղեցւոյ անունով իր շնորհակալութիւնները յայտնեց Վերակացու Անթոնովիչին եւ Տիար Փէրիին:

Հանդիսաւոր այս առիթէն օգտուելով Եկեղեցին լռելեան աճուրդ եւ վիճակահանութիւն կազմակերպած էր ի նպաստ Ծուխի հոգեւոր առաքելութեան: Ապա Տէր Ներսէս Քահանայ եւ Պրն. Սիմոնեան իւղանկար մը նուիրեցին Առաջնորդ Սրբապան Հօր, որ շնորհակալութիւն յայտնեց այս անակնկալ նուէրին համար:

Սրբապան Հայրը փակման խօսքին մէջ իր գոհունակութիւնը յայտնեց ստեղծուած խանդավառութեան համար եւ անգամ մը եւս յիշեցուց, որ Եկեղեցին բոլորին կը պարկանէր եւ թէ հոգեւոր ծառայութեան կողքին, բոլորին նուիրական պարտականութիւնն էր մաս կազմել անոր ծախսերուն եւ առաւել պայծառութեան:

Իր շնորհաւորութիւնները յայտնեց Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանին, Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան, Հայ Լեզուի եւ Կիրակնօրեայ Վարժարանի պարասխանատուներուն եւ համայն հաւատացեալներուն՝ քաջալերելով, որ հաւաքական նուիրումով պայծառացնէին նորած Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցին:

Իր փակման խօսքի աւարտին, Առաջնորդ Սրբապան Հայրը Օրհնութեան եւ Գնահատութեան Վկայագիր յանձնեց Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներուն.–

Ուիլերմ Սիմոնեանին, Յարութ (Հէրի) Սողոմոնեանին, Ճորճ Թապաղեանին, Անի Տէմիրճեանին, Ալտա Էսքիճեանին, Տոնարա Սիմոնեանին եւ Ճան Թունկայեանին: Նոյնպէս Տիկնանց Միութեան հետեւեալ անդամներուն.–

Մարալ Սապունճեանին, Յասմիկ Թուֆէնքեանին, Լիտա Վահրամեանին, Թագուշ Կարապետեանին, Քրիսթին Վահրամեանին, Ալիս Չագրեանին, Յասմիկ Թապաղեանին եւ Արմիկ Էլընի:

Ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակեց օրուան յայտագիրը:

*«Թագաւոր Երկնաւոր, Վեկեղեցի քո անշարժ պահեա՛ եւ երկրպագուս անուանդ քում
պահեա՛ ի խաղաղութեան»:*

Պրրպէնք, Դեկտ. 22, 2009

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ